«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունիսի 2018 թվականի

«Ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը Եղեգնաձորի մասնաճյուղում» հարցի մասին

Լսելով և քննարկելով **«Ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը Եղեգնաձորի մասնաճյուղում»** հարցը (զեկուցող՝ մասնաճյուղի տնօրեն, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ս.Վ.Խաչիկյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. 2017-2018 թթ. ժամանակաշրջանում մասնաճյուղում իրականացվել են ուսումնագիտական, կրթական, հետազոտական, կազմակերպական, մեթոդական, կրթության որակի ապահովման, միջազգայնացման ու հանրային բնույթի աշխատանքներ, որոնց նպատակն է եղել ապահովել մասնաճյուղի բնականոն գործունեությունը և նպաստել կրթական ու գիտական համակարգերի արդյունավետության բարձրացմանը:

Մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրով ուսումնական գործընթացը կազմակերպվել է «Կառավարում» (այդ թվում՝ «Զբոսաշրջության կառավարում»), «Ֆինանսներ» և «Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)», իսկ մագիստրոսի կրթական ծրագրով՝ «Գործարար վարչարարություն» և «Հանրային ֆինանսներ» մասնագիտություններով՝ ՀՊՏՀ-ում կիրառվող չափանիշներին, չափորոշիչներին ու կրթական համակարգի մյուս բաղադրիչներին համապատասխան: 2018 թ. ամփոփիչ բոլոր ատեստավորումները կազմակերպվել են մասնաճյուղում, որի արդյունքում ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել են տեսական դասընթացն ավարտած բակալավրի 56 (որից 14-ը՝ հեռակա) և մագիստրատուրայի 28 ուսանողներ:

Մասնաճյուղի գործունեության 2017-2018 ուսումնական տարվա առանձնահատկություններից է եղել միջազգայնացման և հանրայնացման ուղղությամբ իրականացված աշխատանքները տարբեր ուղղություններով, որոնց արդյունքում մշակվել են գիտական ու կրթական բնույթի ծրագրային փաթեթներ, ինչպես նաև կատարվել են աշխատանքներ կրթական նորարարական տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ:

Մասնաճյուղի գործունեության մեջ կարևորվել է ուսանողների մարզամշակութային, ժամանցային ու հանրային օրակարգի կազմակերպումը, որոնց նպաստել են մայր բուհի լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի, ինչպես նաև ուսանողական խորհրդի հետ իրականացվող աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում հրատարակվել են գիտաժողովի նյութեր ու հետազոտական աշխատանքներ, ներդրվել են հետազոտությունների իրականացման համակարգչային ծրագրային փաթեթներ, կազմակերպվել են միջազգային հարաբերությունների հաստատման ու զարգացման գործընթացներ:

Մասնաճյուղում 2017-2018 ուսումնական տարվա ընթացքում իրականացվել են սոցիալական բնույթի ծրագրեր, մասնավորապես՝ տրամադրվել են ուսման վարձի զեղչեր, տարբեր կազմակերպություններից բարձր առաջադիմության կամ սոցիալական ապահովության հիմքերով հատկացվել են կրթաթոշակներ ու դրամաշնորհներ, որոնց արդյունքում վճարովի ուսուցման համակարգում սովորող ուսանողների մոտ 35%-ը եղել է այդ ծրագրերի շահառու:

Ընդհանուր առմամբ, 2017-2018 թթ. ժամանակահատվածում մասնաճյուղի ուսումնական, կազմակերպական, գիտական, վարչատնտեսական և հանրային գործընթացներն իրականացվել են ՀՊՏՀ կրթական և ուսումնական ծրագրերին, սահմանված ընթացակարգերին ու կանոնակարգերին համապատասխան:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը **որոշում է՝**

1. **Մասնաճյուղի 2017-2018 թթ. ժամանակահատվածի ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման մասին հաշվետվությունն ընդունել ի գիտություն և կատարված աշխատանքը գնահատել բավարար:**

2. **Հանձնարարել մասնաճյուղի տնօրենին՝**
   1) իրականացնել մասնաճյուղի ուսումնական, մեթոդական, կազմակերպական, վարչական ու գիտական գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքներ՝ համագործակցելով ՀՊՏՀ համապատասխան ստորաբաժանումների հետ,
   2) կազմակերպել միջազգային ու տեղական տարբեր կազմակերպությունների հետ համագործակցության բարձրացման և կրթական ու գիտական արդյունքների առևտրայնացման ուղղությամբ իրականացվող աշխատանքներ,
   3) ապահովել կրթական նորարարական տեխնոլոգիաների ներդրման ու այդ գործընթացում դասախոսների և ուսանողների մասնակցության ծրագրերի իրականացումը:

3. **Սույն որոշումը քննարկել մասնաճյուղի տնօրինության նիստում և իրականացնել միջոցառումներ նշված հանձնարարականներն իրականացնելու ուղղությամբ:**

4. **Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել պրոռեկտորներ Պ.Ա.Քալանթարյանին, Մ.Ն.Հարությունյանին և Գ.Ի.Վարդանյանին:**

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

2018 թ. Հունիսի 15
Երևան